## Իններորդ թողարկում

| | |
|---|---|
| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի Իններորդ թողարկման հիմնական պայմանները. | |
| Արժեթղթերի դասը | Անվանական արժեկտրոնային |
| Արժեթղթերի ձևը | Ոչ փաստաթղթային |
| Մեկ արժեթղի անվանական արժեքը | 25 ԱՄՆ դոլար |
| Արժեթղթերի քանակը | 80 000 հատ |
| Մեկ թողարկման ընդհանուր ծավալ | 2 000 000 ԱՄՆ դոլար |
| Արժեկտրոնային եկամուտ (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք ) | Տարեկան 7,25%, որը կհաշվարկվի սկսած տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող օրվանից |
| Արժեկտրոնային եկամուտների վճարում | Եռամսյակային վճարումների պարբերականությամբ |
| Շրջանառության ժամկետ | 36 ամիս |
| Տեղաբաշխման ժամկետ | 15/06/2015թ.-26/06/2015թ. |
| Տեղեկացնում ենք, որ պարտատոմսերի թողարկման ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 06/06/2015թ.: | |
| Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռք բերել 15/06/2015թ.-ից մինչև 26/06/2015թ.-ը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ ցուցակումից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում, մասնավորապես «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առևտրային հարթակում: | |
| Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է անձնական հաշիվներ բացել “Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա” ԲԲԸ –ի կողմից հաշվի օպերատորի կարգավիճակ ստացած ընկերություններում և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ–ում կամ ՀՀ տարածքում գործող ցանկացած բանկում: Կատարելով ներդրում կորպորատիվ պարտատոմսերում՝ Դուք կարող եք շրջանառության ընթացքում ցանկացած պահի դրանք վաճառելիս ետ ստանալ ոչ միայն ներդրված գումարը, այլ նաև կուտակված տոկոսները: | |
| “Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին” ՀՀ օրենքի համաձայն, Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են “Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի” կողմից: | |
| Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 27.06.2018թ. | |

Ծանուցում.

| ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի իններորդ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով | |
|---|---|
| Արժեկտրոնային եկամուտների առաջին վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից երեք ամիս անց, հաջորդ օրը՝ 27.09.2015թ. |
| Արժեկտրոնային եկամուտների երկրորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից վեց ամիս անց համապատասխան օրը՝ 27.12.2015թ. |
| Արժեկտրոնային եկամուտների երրորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից ինը ամիս անց համապատասխան օրը՝ 27.03.2016թ. |
| Արժեկտրոնային եկամուտների չորրորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից տասներկու ամիս անց համապատասխան օրը՝ 27.06.2016թ. |
| Արժեկտրոնային եկամուտների հինգերորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից տասնհինգ ամիս անց համապատասխան օրը՝ 27.09.2016թ. |
| Արժեկտրոնային եկամուտների վեցերորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից տասնութ ամիս անց համապատասխան օրը՝ 27.12.2016թ. |
| Արժեկտրոնային եկամուտների յոթերորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից քսանմեկ ամիս անց համապատասխան օրը՝ 27.03.2017թ. |
| Արժեկտրոնային եկամուտների ութերորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից քսանչորս ամիս անց համապատասխան օրը՝ 27.06.2017թ. |
| Արժեկտրոնային եկամուտների իններորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից քսանյոթ ամիս անց համապատասխան օրը՝ 27.09.2017թ. |
| Արժեկտրոնային եկամուտների տասներորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից երեսուն ամիս անց համապատասխան օրը՝ 27.12.2017թ. |
| Արժեկտրոնային եկամուտների տասնմեկերորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից երեսուներեք ամիս անց համապատասխան օրը՝ 27.03.2018թ. |
| Արժեկտրոնային եկամուտների տասներկուերորդ վճարում | տեղաբաշխման ավարտի օրվանից երեսունվեց ամիս անց համապատասխան օրը՝ 27.06.2018թ. |

| |
|---|
| Այն դեպքում, երբ արժեկտրոնային եկամուտների վճարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը: |
| Արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման գումարի փոխանցումը կատարվելու է ՀԿԴ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին՝ պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման օրվա մինչև ժամը 1400-ն: Արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև մարման գումարը վճարվում են վճարման օրվանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 18□00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում, պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին□ |
| Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ Պարտատոմսերի թողարկման **ազդագրում**, որը 06.06.15թ.-ին գրանցվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից: |